

կարգին հեղինակութիւն և ազդեցութիւն գաւառներու վրայ :

Կ. Պոլսոյ Հայ գաղութը կեդրոն դարձաւ բովանդակ թուրքիոյ սահմաններուն մէջ բնակող Հայերուն, շնորհիւ քաղաքին բացառիկ դիրքին :

Անոր իբր մայրաքաղաք ունեցած քաղաքական նշանակութիւնն էր որ քաղաքին անուանապէս «պարիսարի» տիտղոսով այլ սակայն իրականապէս սոսկ եպիսկոպոսական պաշտօնով եկեղեցականներուն կուտար մասնաւոր դիրք մը՝ մանաւանդ ԺՆ. գարէն յետոյ, երբ Կ. Պոլսոյ եպիսկոպոսը իրեն ստորագաս կ'ունենար ուրիշ առաջնորդութիւններ, որոնց հանգամանքը և իշխանութիւնը կառավարութեան առջեւ պաշտօնապէս միայն Կ. Պոլսոյ պատրիարքին միջնորդութեամբ կրնար ճշդուիլ :

Կ. Պոլսոյ պատրիարքութիւնը ասով իրապէս ոչ միայն կ'ըլլար «սուաջիև ի հաւաարս» կամ «նախապահիւ քեւ» այլ աւելի բան մը, կրօնական տիրապետութիւն մը : Իրեն կ'ստորագասուէին նոյն իսկ քաղաքականապէս կաթողիկոսներ՝ որոնց հաստատութեան հրովարտակները Կ. Պոլսոյ պատրիարքները պիտի ստանային :

Այսպէս Կ. Պոլսոյ Հայ պատրիարքութիւնը կ'ստանար բացառիկ կարևորութիւն